

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱԻԱՍԱՐ ԻՐԱԽՈՒՆՔՆԵՐՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԳԵԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՏԱՃԱՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ 1811-1813 թթ. ԸՍՏ ԹԷՈԴՈՐՈՍ Բ. ՎԱՆԵՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆՈՐԱՅԱՅՏ ՆԱՄԱԿԻՆ ԵՒ ՄԱՀՄՈՒՏ Բ. ՍՈՒԼԹԱՆԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԻՆ

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան համար մաքառման ու գոյատեւման դժուարագոյն առաքելութիւնն է պահպանել այն սրբազան ժառանգութիւնը, որ փոխանցուած է դարէ-դար եւ սերունդէ-սերունդ: Այդ առաքելութիւնը իրականացնելու ճանապարհին միշտ եղած են խիզախ ու նուիրեալ անհատականութիւններ, որոնք Հայ Երուսաղէմի վարչա-իրաւական, կրօնական եւ մշակութային ներկայութեան համար ձեռնարկած ու կատարած են երբեմն անկարելին: Այդպիսի մի դժուարագոյն շրջան կ'ապրէր Հայ Երուսաղէմը 19-րդ դարասկզբին, երբ Պատրիարքական գահ բարձրացաւ Թէոդորոս Բ. Վանեցին (1800-1818):

Օսմանեան իշխանութիւններու հետ դրական յարաբերութիւններու ապահովումը եւ Պաղեստինի մէջ Օսմանահպատակ հայութեան ու Սրբոց Յակոբեանց Առաքելական Սուրբ Աթոռի կենսական շահերու պաշտպանութիւնը կ'իրականացուէին Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան, Պոլսոյ մէջ Երուսաղէմի փոխանորդ (վէքիլի) եւ հոն գործող հայ երեւելի ամիրաներու եւ այլ անհատներու ջանքերով ձեռք բերուած հրովարտականերով (Ֆերմաններ) ու հէօճէթներով (գիր արքունի դրան, մուրհակ¹): Եւ ընդհանրապէս Սուրբ Երկրի մէջ սրբատեղիներէն ներս իրաւունքներու կամ ծիսա-արարողակարգային բոլոր վէճերն ու խնդիրները կը լուծուէին հրամանագիրներով կամ Ֆերմաններով, իլամներով (վճիռ) որոնց գործադրումն ալ կ'ենթադրէր կաշառք կամ սերտ յարաբերութիւն Դամասկոսի Կոստակալի, Երուսաղէմի Դատաւորի կամ այլ Օսմանեան բարձրաստիճան պաշտօնեաներու հետ: Ուստի Հայոց Պատրիարքներու գործունէութեան գնահատման համար անհրաժեշտ է հաշուի առնել նաեւ անոնց ձեռք բերած իրաւական փաստաթուղթերն ու հրովարտականները: Այս առումով պատմագիտական արժէքաւոր նիւթեր են Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Մայր Դիւանի մէջ պահպանուող հայերէն, արաբերէն եւ օսմաներէն վաւերագրերն ու պատրիարքներու նամակները, որոնցմէ սոյն յօդուած-հրապարակման շրջանակէն ներս պիտի քննենք Թէոդորոս Պատրիարքի գահակալութեան շրջանը եւ 1813 Յունուար 13 թուակիր վաւերագիրը եւ սուլթանին հրովարտակը:

Սաւալանեանցի համաձայն՝ «վշտակիր պատրիարքին (իմա՝ Պետրոս Եւդոկիացիի - Տ.Ա.Յ.) մահէն ետք բոլորովին կը մարի այլեւս բարօրութեան ամէն յոյս, որուն կ'ակնկալէր միաբանութիւնը, ու չարիք-չարիքի եւ զրկանք-զրկանքի վրայ կը բարդուին ամէն կողմէ»²: Թէոդորոս Բ. Վանեցի գահ կը բարձրանայ հաւկապուած: Առաջին հեր-

¹ Նոր Բաղգիր Հայկազեան Լեզուի, Վենետիկ, 1837, էջ 301, Ամբրոսիոս Վրդ. Գալֆայեան, Առնետն բաղգիրքի Տաճիկ լեզուէ ի Հայ, Թէոդոսիա, 1863, էջ 139 (ստորեւ՝ ԱԳ):

² Տ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, Հատոր Բ, Երուսաղէմ, 1931, էջ 817:

թին ասիկա կը բացատրուի անով, «զի յայնմ ժամանակի ոչ միայն չգտանէր դրամ ի վանս, այլ և անկեալ էին ընդ պարտեօք»³, իսկ աւելի կարեւոր պարագան այն էր, որ Պոլսոյ ազգայինները խստութեամբ արձագանգած էին Թէոդորոս Պատրիարքի հրաժարականին եւ նոյնիսկ սպառնացած. «Պատրիարքի ընտրութիւն պիտի չկատարեն այլեւս, այլ Երուսաղէմի Աթոռին իշխանութիւնը պիտի միացնեն Կ. Պոլսոյ պատրիարքութեան, ու փոխանորդ մը պիտի ղրկեն Երուսաղէմ»⁴: Այսպիսի որոշման իրագործումն ալ աւելի պիտի ծանրացնէր Սուրբ Աթոռին վիճակը:

Մահմետական հարստահարիչ կառավարիչներէ զատ, յարձակողական տրամադրութիւն ունէին նաեւ քրիստոնեայ իրաւատէր միւս եկեղեցիները. «Յոյնք և Լատինք ծանեան զաղքատութիւնս և զթշուառութիւնս միաբանացն հայոց, սկսան ոտնահարել և թշնամանել զնոսա և հակառակիլ ի բազում պարագայս»⁵: Սուրբ Աթոռի օր ըստ օրէ վատթարացող վիճակը առիթ կը հանդիսանար սրբատեղիներու մէջ միւս իրաւատէր եկեղեցիներու եւ տեղի միւսիւման բնակչութեան համար ոտնձգութիւններ կատարել հայոց նկատմամբ:

Դժուարին այս իրավիճակով պայմանաւորուած եւ յանուն Սուրբ Աթոռի, Թէոդորոս Վանեցի Արք.-ը կը ստանձնէ Պատրիարքական պարտաւորութիւնները 1802 թ.-ին եւ անմիջապէս ձեռնամուկ կ'ըլլայ իր նախորդներու ատենէն գոյացած հսկայածաւալ պարտքերը փակելու, ինչպէս նաեւ վերականգնելու եւ ամրապնդելու հայոց դիրքերը սրբատեղիներու մէջ, վերապատրաստելու նոր սերունդ մը եւ նուիրեալ աշակիցներ՝ գործերը յաջողութեամբ վարելու նպատակով: Սակայն այս ամէնն իրագործելու համար կենսականօրէն անհրաժեշտ էին լաւ եւ կայուն յարաբերութիւններ Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան եւ երեւելի ամիրաներու հետ, որոնք կ'ապահովէին կարեւոր տեղեկութիւններ, հարկ եղած պարագային ձեռք կը բերէին անհրաժեշտ ֆերման, հէօճէթ, եւ կամ կը համոզէին սուլթանը, եպարքոսը կամ մէկ այլ կարեւոր պաշտօնեայ ի նպաստ հայոց որոշումներ կայացնելու:

Թէոդորոս Պատրիարքի գահակալութեան առաջին տարիները դրական ընթացք արձանագրեցին, եւ այս ընթացքը բաւական լուրջ յաջողութիւն կրնար ունենալ, եթէ Սուրբ Յարութեան Տաճարին մէջ չպատահէր հրդեհը (Սեպտեմբեր 30, 1808):

Ստորեւ գտնուող նամակին մէջ Թէոդորոս Պատրիարք ուրախութեամբ կը նկարագրէ հայոց իրաւունքներու վերականգնումը՝ Սուրբ Յարութեան, Սուրբ Ծննդեան եւ Սուրբ Աստուածածնի տաճարներուն մէջ: Յատկապէս այս շրջանին կարեւոր էր Սուլթան Մահմուտ Բ.-ի տուած Յունուար 13, 1813, (ստորագրուած Փետրուար, 1811) ֆերմանը⁶, որուն հայեր կը սպասէին գրեթէ երկու տարի եւ որով վերականգնուեցան հայոց ամենօրեայ սուրբ պատարագները Սուրբ Աստուածածնի գերեզմանին վրայ եւ Բեթղէհէմի մէջ Սուրբ Ծննդեան Այրին վրայ, ինչպէս նաեւ հաւասար իրաւունքները՝ կանթեղներ կախելու, նորոգութիւն կատարելու եւ այլն:

Այս հրամանագրով նաեւ կը վերահաստատուի ղպտոց, ասորւոց եւ եթովպացիներու (հայէշներ) հայոց հետեւակ (Եամաք) ըլլալու հանգամանքը, որ միշտ կը հաստատուի նախորդ եւ յաջորդ ֆերմաններով եւ պաշտօնական գոյավիճակով: Վերոնշեալ երեք տաճարներն ալ յատկապէս կը կարեւորուին իրենց համաքրիստոնէական սրբատեղիներ ըլլալու նշանակութեամբ եւ երբեմն նաեւ միջազգային քաղաքականու-

³ Աստուածատուր Եպս. Յովհաննիսեանց, Պատմութիւն Երուսաղէմի, Հատոր Բ, Երուսաղէմ, 1890, էջ 134-135:

⁴ Տ. Սաւալանեանց, նշ. աշխ., էջ 822:

⁵ Աստուածատուր Եպս. Յովհաննիսեանց, նշ. աշխ. էջ 135:

⁶ Սբ. Թէոդորոս Ձեռագրատուն, Երուսաղէմ, Ձեռագիր թիւ 85, էջ 62-68 (հայատառ օսմաներէն):

թեան մէջ կարեւորութիւն ունենալու հանգամանքով:

Սուրբ Ծննդեան եւ Սուրբ Աստուածածնի տաճարներն ալ ուղղակիօրէն կապուած են հայոց հետ յատկապէս, ինչպէս կը վկայէ ցայսօր պահպանուած Սուրբ Ծննդեան տաճարին փայտեայ գլխաւոր դրան վրայ փորագրուած հայկական արձանագրութիւնը. «Ի թուին հայոց ՈՂ և Զ (1227) կազմեցաւ դուռս Սուրբ Աստուածածնիս ձեռամբ Տէր Աբրահամ և Տէր Առաքելոյ, ի թագաւորութեանս տեառն Հեթմոյ որդւոյ Կոստանդնի, Քրիստոս Աստուած ողորմեսցի աշխատաւորաց»⁷:

Յատկանշական է, որ Սուրբ Աստուածածնի տաճարին վերակառուցումը եւս հայոց հետ է կապուած: Ի թիւս այլ սրբատեղիներու մօտաւորապէս 1150 թուականին հայազգի Մելիսանտ Երուսաղէմի թագուհին կը նորոգէ տաճարը, որ գրեթէ անմիջապէս պիտի վնասուէր 1187-ին՝ Սալահէտինի կողմէ Երուսաղէմի գրաւումով: 1301 թուականին Երուսաղէմ գտնուած ատեն կեդրոնական գլխաւոր խորանը կը կառուցէ հայոց Հեթում Բ. թագաւորը: 1413 թուին Պօղոս Գառնեցի Պատրիարքը (յետոյ կաթողիկոս ամենայն հայոց) տաճարին կից արտը (ցայսօր հայոց սեփականութիւն) գնելով կը միացնէ եկեղեցիին եւ կը ձեռնարկէ վերանորոգութեան, որ ապագային պիտի ամբողջացնէր Մարտիրոս Պատրիարք 1421-ին⁸:

Թէոդորոս Պատրիարք իր նամակին մէջ յատկապէս կը նշէ, որ ֆէրմանի ստացումով յոյներ բողոքի նոր ալիք կը բարձրացնեն, կը յաջողին կաշառել գործակալներէն երկուքը, որոնց սուլթանը յետոյ կը հրամայէ քսորել: Բարեբախտաբար գործակալներէն մին՝ Նուրի էֆենտի, հաստատակամ մնալով՝ նոր նշանակուած դատաւորին հետ, կը պաշտպանէ հայոց իրաւունքները⁹: Լատիններու ջանքերը իրաւունք ձեռք բերելու Սուրբ Աստուածածնի տաճարէն ներս, կը ձախողին:

1808 թուականի Սեպտեմբեր 30-ին¹⁰ Սուրբ Յարութեան տաճարին մէջ տեղի ունեցած հրդեհի¹¹ դէպքը հայոց նկատմամբ հալածանքներ սկսելու նոր փորձերու առիթ մը կը հանդիսանայ յունաց կողմէ, որ միշտ մտադրած էին դաւադրութեամբ ու կաշառքով գլխաւոր սրբավայրերէն դուրս հանել հայերը:

Ծանրագոյն պայմաններու տակ իսկ Միաբանութիւնն ու Թէոդորոս Պատրիարք տեղի չեն տար եւ Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան, Ամիրաներու եւ վէբիլ Պօղոս Արք.ի մեծ ջանքերուն շնորհիւ կը յաջողին հայոց ունեցած ընկերովի իրաւունքները վերականգնել եւ հայոց սեփականութիւնները ամրապնդել եւ ընդլայնել. «Սուլթանը նոր ու սաստիկ հրաման մը կը ղրկէ Դամասկոսի կուսակալին (իմա՝ Սիլահտար Սուլէյման փաշա - **Տ.Ա.Յ.**), պատուիրելով կէտ առ կէտ կատարել հրովարտակին մէջ գրուածները ու սպառնալով պատուհասել զանցառուները: Յատուկ հրովարտակ մըն ալ կը ղրկէ, որով կը հրամայէ **Ս. Ծննդեան եւ Ս. Աստուածածնի եկեղեցիները յոյներուն եւ հայերուն միջեւ բաժնել հաւասարապէս**»¹²: Երկար դադարէ յետոյ առաջին Ս. Պատարագը **Ս. Ծննդեան** տաճարին մէջ կը մատուցուի Նոյեմբեր 25-ին¹³ ի փրկութիւն հոգւոյ ընդհանուր հայ ազգին:

⁷ **Տ. Սաւլանեանց**, Պատմութիւն Երուսաղէմի, Հատոր Ա, Երուսաղէմ, 1931, ք տպ. 2000 էջ 463:

⁸ **Մկրտիչ Եպս. Աղաւունի**, Հայկական Հին Վանքեր եւ Եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ, Երուսաղէմ, 1931, էջ 194:

⁹ Մայր Դիւան Երուսաղէմի հայոց պատրիարքութեան, Թէոդորոս Պատրիարքի նամականի, #282a:

¹⁰ Սբ. Թէոդորոս Ձեռագրատուն, Երուսաղէմ, Ձեռագիր ք. 3710: Հմմտ. նաեւ **Մ. Արք. Օրմանեան**, Ազգապատում, Գ հատոր, Երուսաղէմ, 1927, էջ 3386,

¹¹ **Տ. Սաւլանեանց**, նշ. աշխ., էջ 846:

¹² Նոյն տեղում, էջ 901:

¹³ Նոյն տեղում, էջ 918:

Այս եւ այլ իրաւունքներ կը պահպանուին ցայսօր Սրբոց Յակոբեանց Միաբանութեան կողմէ ամենօրեայ սուրբ պատարագներով եւ պաշտամունքներով:

Ստորեւ կը ներկայացնենք Թէոդորոս Պատրիարքի վերոնշեալ նամակին հրատարակութիւնը՝ ըստ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Մայր Դիւանի մէջ պահուող Թէոդորոս Պատրիարքի նամականիի տուեալներուն (#222a եւ b): Նամակը գրուած է 42,4×17 չափերով թուղթի վրայ եւ խիտ բոլորգիր տողերով: Նամակին մէջ օգտագործուած օտարալեզու բառերու կողքին, ընթերցանութիւնը դիւրացնելու նպատակով, փակագիծերու մէջ տուած ենք նաեւ անոնց հայերէն իմաստը:

Թագաւորական հրովարտակի, 1813, Յունուար 13¹⁴, դրոյթները կեանքի կոչելու համար սուլթանը կը նշանակէ երեք պաշտօնեաներ, միւլեյլայ փաստաբան՝ Մէհմէտ Նուրի էֆէնտի, ոստիկան՝ Բէշիտ Մուսթաֆա Խօճակեան էֆէնտի եւ ճարտարապետ՝ Մէհմէտ Մեյմար. «Ի կատարումն սոյն վերնագիր հրամանագրաց կարգեցան յԱրքայէն գ զլիւար գործակալք՝ միւլեյլայ (հետեւակ)¹⁵ Նուրի էֆէնտի, Խօճակեան եւ Մեյմար ասացեալ. և առաքեցան ի Դամասկոս առ փաշան իշխողն Երուսաղէմի և անտի յԵրուսաղէմ փաշայի գրովն և մուպաշիրովն (գործակալ)¹⁶»: Անդրադառնալով հրամանագրին կարեւորութեան եւ գործը մինչեւ վերջ կատարելու սուլթանի լուրջ տրամադրուածութեան, յոյներ աջ ու ձախ դրամ չեն խնայեր կաշառելու կամ մեծ գումարներ խոստանալով՝ պաշտօնեաները իրենց կողմնակից դարձնելու դաւադրական գործին: Հայեր ալ իրենց կարգին օգտուելով հրամանագրէն կը ձեռնարկեն Սուրբ Յարութեան տաճարին մէջ կանթեղներ կախելու, յոյներու կողմէ ամբողջութեամբ քանդուած հայոց Իւղաբերից խորանը վերականգնելու: Յոյներ կը յաջողին Պոլիսէն եկած գործակալներէն երկուքը սիրաշահիլ՝ կաշառելով Խօճակեանը եւ Երուսաղէմի դատաւորը: Յոյս ունենալով, որ կը յաջողին կաշառել Դամասկոսի կուսակալը եւս՝ Խօճակեանի եւ Երուսաղէմի քաղաքապետին միջոցաւ առկախեալ կը թողուն հրամանագրին ամբողջական իրագործումը: Ոստիկան Խօճակեան 5000 դահկանով կաշառուած էր յունաց կողմէ, որպէսզի անկատար ձգէ գործը եւ մեկնի Պոլիս: Ճարտարապետ Մեյմար կատարելով իր չափագրումներն ու գծագրումները Սուրբ Յարութեան, Սուրբ Ծննդեան եւ Աստուածածնի տաճարներէ ներս եւ ստանալով իր հասանելիք գումարը, նոյնպէս կը լքէ Երուսաղէմը:

Փաստաբան Նուրի էֆէնտի հաստատակամ մնալով իր ստանձնած պարտականութիւններուն կատարման, կը մնայ Երուսաղէմ՝ սպասելով կուսակալին կողմէ վերջնական հրամանի: Սուլթանը լսելով գործը անաւարտ ձգած Խօճակեանի մասին, կը հրամայէ մահապատժի ենթարկել, սակայն Բղեշխին միջնորդութեամբ կ'աքսորուի Անապա. «Եհաս բանն առ Թագաւորն և ի մեծ բարկութիւն շարժեալ հրամայէ նախ զԽօճակեանն մահացուցանել. և ի ձեռն միջնորդաց փոխան մահանալոյ յԱնաբա ի Սեաւ ծովու», իսկ կաշառուած դատաւորը կ'աքսորուի Կիպրոս:

Բարեբախտաբար Սուլթանը հաստատակամ մնալով իր տուած ֆէրմանին, հետամուտ կ'ըլլայ անոր ամբողջական իրագործումին եւ նոր գործակալ մը կը նշանակէ աքսորեալներու փոխարէն եւ Շէյխ իւլ իսլամին իւլամով կը զրկէ Երուսաղէմ, որպէսզի Նուրի էֆէնտիին հետ գործը աւարտին հասցնեն. «զի բունն է զօրութիւն արքային առ այս և զստահական ունի ըստ արժանիցն պատժել»:

Հիմնական խնդրայարոյց կէտը յունաց համար այն էր, որ հայերը հաւասար իրա-

¹⁴ Ֆերման թիւ 731, Մայր Դիւան Երուսաղէմի հայոց պատրիարքութեան, Թէոդորոս Պատրիարքի նամականի, #222a եւ b:

¹⁵ Մ. Աբիկեան, Ընդարձակ բառարան Տանկերէնէ Հայերէն, Կ. Պոլիս, 1892, էջ 596:

¹⁶ ԱԳ, էջ 137:

ւունքներ կը ստանային Բեթղեհէմի Սուրբ Ծննդեան տաճարին եւ Սուրբ Աստուածածնի տաճարին մէջ՝ ամենօրեայ պատարագներով:

Նոր գործակալին ժամանումով գործը կը վերսկսի: Նախ պատասխանատուները կ'ուղեւորին Բեթղեհէմ եւ տեղւոյն վրայ հայերուն կը յանձնեն գլխաւոր դրան բանալին, ապա հայերը կը վերստանան Սուրբ Այրի հիւսիսակողմի հայոց բաժինը երկու խորաններով՝ Անուանակոչութեան եւ Թագաւորաց (մոգերու), Սուրբ Այրին մէջ ամէն օր պատարագելու իրաւունքը՝ հաւասար յունաց, ինչպէս նաեւ հրամայուած էր. «Անպատճառ զհրաման արքային ըստ առաջնոյ **խաթիցն**, յառաջացուցանել եւ զԲեթղեհէմն եւ զԱստուածածնի գերեզմանն ի մէջ երկու ազգացս հաւասար գոլ ցուցանել ամենայն պարագայիւք եւ զընդդիմակալացն պատիժ ներկայ դնել առաջի», «Ապա ի նոյն օր գնալ եղև ամենեցուն ի սուրբ Ծնունդ. եւ ընկալաք զբանալի դրան անխտիր մտանել եւ ելանել եւ տիրացաք երկու խորանացն (իմա՝ Անուանակոչութեան եւ Թագաւորաց կամ մոգերու - **Տ.Ա.Յ.**) մերոց որ ի հիւսիսակողմն ըստ ամենայն պարագայիցն եւ կախեցաք զտասն կանթեղս եւ զերկուս պատկերս. եւ զմի **շամատան (աշտանակ)**¹⁷ մշտավառս ի մէջ սուրբ այրին»:

Քանի մը օր ետք կ'երթան Սուրբ Աստուածածնի տաճար եւ կը վերականգնեն իրաւունքները. «Եւ յետ ինչ աւուրց գնացեալ եղև ի Գեթսեմանի ի գերեզմանն Տիրամօր Կուսին ուր ըստ ամենայնի պատարագօք, կանթեղօք, պատկերօք եւ բոլոր պարագայիւք հաւասարաբաժին եղև բ. (2) ազգացս հաճութեամբ»:

Այսպիսով, քանի մը տարի տեւած բանակցութիւններէ, դատերէ ու խռովութիւններէ յետոյ վերջապէս հայեր կրցան «շունչ առնել» եւ կարելոր այդ երկու սրբատեղիներու մէջ վերականգնուած տեսնել հայոց իրաւական եւ ծիսա-արարողակարգային ներկայութիւնը՝ հաւասար յունաց:

Ֆրանչիսկեաններ Սուրբ Աստուածածնի տաճարէն հեռացուած էին 1757-էն¹⁸ եւ մինչեւ օրս ալ որեւէ իրաւունք չունին հոն, իսկ Բեթղեհէմի Սուրբ Ծննդեան Այրի Աւագ խորանին պատարագելու իրաւունք չունին, այլ միայն՝ իրենց խորանին Ս. Այրի հիւսիս-արեւմտեան մասին մէջ, ուր մսուրն է:

Բոլոր այն ընթերցողներուն համար, որոնք Երուսաղէմ չեն եղած, այս մանրամասները գուցէ տարօրինակ թուին, սակայն պէտք է արձանագրել, որ աշխարհի վրայ չկայ վայր մը, ուր իրաւունքներու բաժանման կամ հաւասար իրաւունքներ ունենալու համար մղուի այնպիսի սուր պայքար Քրիստոնեաներու միջեւ՝ որքան Երուսաղէմի մէջ: Երուսաղէմի համաքրիստոնէական գլխաւոր սրբատեղիներու մէջ՝ Սուրբ Յարութեան, Սուրբ Աստուածածնի, Բեթղեհէմի Սուրբ Ծննդեան տաճարներ եւ Համբարձման Լեռ իրաւունքներ ունենալու կամ ձեռքբերուած իրաւունքները պահպանելու պայքարը շատ ծանր եղած է հայոց համար, սակայն Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը պատուով կատարած է եւ կը շարունակէ կատարել իրաւունքները պահպանելու իր առաքելութիւնը:

Երուսաղէմի մէջ հայեր Հայ Եկեղեցւոյ իրաւունքները պահպանելու կողքին ունին նաեւ մէկ այլ առաքելութիւն՝ պահպանել իրաւունքները նաեւ հետեւակ երեք ազգերու կամ եկեղեցիներու՝ Ղպտոց, Ասորւոց եւ Եթովպացւոց, որոնցմէ վերջինը գրեթէ ամբողջութեամբ կորսնցուցած է իր իրաւունքները իսկ միւս երկուքը առանց հայերու թոյլտուութեան եւ ներկայութեան արարողութիւն չեն կրնար կատարել վերոնշեալ սրբատեղիներուն մէջ:

¹⁷ ԱԳ, էջ 145:

¹⁸ The Status Quo in the Holy Places, L.G.A. Cust, Jerusalem, 1980, page 35.

Թէոդորոս Բ. Վանեցի Պատրիարքի նամակէն կը հասկնանք ժամանակի մը թնոլորտն ու տարատեսակ դժուարութիւնները, որոնց յաղթահարման համար ահռելի ջանք ու եռանդ պահանջուած է եւ միասնական անդու աշխատանք թէ՛ Երուսաղէմի եւ թէ՛ Պոլսոյ մէջ, եւ այդ միասնականութեան շնորհիւ էր որ վերականգնուած եւ մեզի փոխանցուած են այն բոլոր իրաւունքներն ու պարտականութիւնները, զորս սրբութեամբ կը պահպանէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը յանձին Սրբոց Յակոբեանց Զինւորեալ Միաբանութեան:

Եզրակացութիւն

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պատմութիւնը անբաժանելի մասն է Հայ Եկեղեցւոյ եւ հայոց ազգային պատմութեան: Նուիրական եւ անձնուրաց ծառայութեան բացառիկ օրինակներով, միջ-միաբանական եւ Երուսաղէմի մէջ հաստատուած միւս Քրիստոնէական եկեղեցիներու հետ իւրայատուկ դրական ու բացասական յարաբերութիւններու ճամբով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը մշտաբար հսկողն ու պահպանն է հայոց՝ ազգային, մշակութային, հոգեւոր եւ կալուածական հսկայ ժառանգութեան: Անշուշտ, յարատեւ մաքառումներու ընթացքին երբեմն գերմարդկային համբերատարութեան դրսեւորում է հարկաւոր: Այս նուիրումին լաւագոյն վկայութիւնը Սուրբ Երկրի համաքրիստոնէական սրբավայրերուն մէջ հայոց ներկայութիւնն է որպէս սեփականատէր եւ իրաւատէր Պատրիարքութիւն: Այդ իրաւունքներու պահպանութեան նուիրուած է յօդուածը, որ կ'ընդգրկէ 1811-1813 թթ. Թէոդորոս Բ. Վանեցի Պատրիարքին օրով ձեռք բերուած կարեւորագոյն ֆէրմաններէն մէկը, որով Մահմուտ Բ. Սուլթանը հայերուն հաւասար իրաւունքները կը վերականգնէ Սուրբ Ծննդեան եւ Սուրբ Աստուածածնի տաճարներուն մէջ: Ֆէրմանով կը վերահաստատուի Սուրբ Յարութեան տաճարին մէջ հայոց իրաւատէր ըլլալու փաստը, ինչպէս ղպտիներու, ասորիներու եւ հապէշներու (եթովպացիներու) հայ եկեղեցւոյ հետեւորդ ըլլալու հանգամանքը: Այս ֆէրմանը կարեւոր հիմք հանդիսացած է սրբատեղեաց մէջ յետագայ պայքարի համար:

Սուլթան Մահմուտ Բ. զայն վերահաստատած է 1829-ին տրուած մէկ այլ ֆէրմանով:

ՏԻՐԱՆ ԱՐԴ. ՅԱԿՈԲԵԱՆ

